

Ս Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԼՁԳԵՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ, ԳՐԸԳԻՏԸԿԸՆ

ԵՒ ՔԸԳԸՔԸԿԸՆ

Ը Ռ Ը Ջ Ի Ն Տ Ը Ր Ի

ՅԵՐՈՒՍԸԳԼԷՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1866





Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՅԳԵՅԻՆ ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ ԵՒ ԳՐԸԳԻՏԸԿԸՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. ԹԻՒ 3.

ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԼՅ

ՄԱՐՏ 1866

ԱԶԳԱՅԻՆ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԸՐԳԵՒԸԲԸՇԽՈՒԹԻՒՆ

ՃԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ԴՊՐՈՑԻՆ

ԸՆՑԵԱԼ ԹՈՒՈՎ ծանուցած էինք յառանգաւորաց Դպրոցի աշակերտաց քննութեան սկսիլը, և խոստացեր էինք այս անգամ եղած արդիւնքն ծանուցանել սիրելի հասարակութեան, եւ ՚ի մասնաւորի անոնց որոնք կը փափաքին յիշեալ դպրոցին զարգացմանը և արդիւնաւորութեանը. փափաքելի է մեզ ալ առաւելապէս սոյն նիւթին վրայօք տեղեկութիւններ հաղորդել Սիօնի միջոցով, որոյ գլխաւոր պաշտօնը պիտի ըլլայ միշտ առաջի աչաց օրհնեալ Ազգիս ներկայացընել Սուրբ Աթոռոյս միաբանութեան եւ յառանգաւորաց Դպրոցիս բարեկարգ ընթացքն ու

անոնց բարոյական և ուսումնական յառաջադիմութիւնները. Այս էր վաղուց ՚ի վեր բարեսէր Ազգիս իրաւացի պահանջմունքները, զորոնք երբէք չը պիտի զլանայ Ս. Աթոռս գոհացուցիչ կերպով զանոնք արդարացընելով՝ փութալ ՚ի կատարումն. Թէ և նիւթապէս ալ ճնշուելու ըլլայ ժամանակիս անյաջող պարագայից դառն ու ծանրատաղտուկ լծին տակը, ինչպէս որ կը գտնուի հիմայ. Ազգութեան և կրօնքին սէրը չը պիտի թողու զմեզ երբէք լքանել առաջի դժուարութեանց. այլ ըստ առաքելոյն կը քաջալերեն զմեզ ամենայնի տեւելու, ամենայնի համբերելու,

ջաժենայնի հաւատալու լատուծոյ
օգնականութեան, և ամենեւին յու-
սալու՝ թէ նա պիտի պատրաստէ մեզ
երջանիկ ապագայ մի, յորում ազգու-
վին պիտի ուրախանամք. և ասպա-
րէզ մի, յորում մեր մերձակայ սե-
րունդը ուսմանց եւ գիտութեանց
գրօջը բացած, և իրենց սիրտն ու
հոգին Վրիստոսի և ազգին ճշմարիտ
սիրովը օծած, այնպէս պիտի շահա-
տակեն դարուս լուսաւորեալ ազգաց
հետ մրցելու: «Որ յուսայ ՚ի Տէր,
մի ամաչեսցէ . . . »:

Քննութիւնը, ինչպէս ըսինք անց-
եալ ամսոյ 25 ին սկսաւ յառանգա-
ւորաց Վարդի սրահին մէջ ՚ի ներ-
կայութեան լաւ 1 ուսարար Վե-
րասպատիւ կարապետ Նպիսկոսոսի և
քանի մի վարդապետաց, և ուսում
նական բարեպաշտ ուխտաւորաց ու-
մանց, որոնք մեծ սիրով ու փափա-
քանօք փութացին ներկայ գտնուե-

լու ամեն դասու աշակերտաց քննու-
թեանը: Իւրաքանչիւր դաս, որ ե-
րեքի կը բաժնուին, կարգաւ իւրա-
քանչիւր օր քննուեցան հետագայ
ուսմանց մէջ. Վերականութեան,
Տրամաբանութեան, բնական և քա-
ղաքական լշխարհագրութեան, թը-
ւաբանութեան և Վճագրութեան,
Վիտնալ պէտքէ, որ բոլոր աշակերտք
երկու կարգի կը բաժնուին. առա-
ջին կարգին են նախկին աշակերտք՝
սարկաւագունք և դպիրք. երկրորդ
կարգին են՝ յառանգաւորաց նոր
դպրոցիս աշակերտք, որ առ այժմ
եօթը հոգի են. և ամեն մէկ կարգի
դասերը առանձին ներկայացան ՚ի
քննութիւն. եւ արդիւնքը՝ առանց
իւրաքանչիւր ուսման մէջ ունեցած
կարողութիւնները զատաբար հաշ-
ուելու, այլ միայն համեմատական
կարողութիւններն հետագայ ցուցա-
կէն կը յայտնուի:

Ա. ԿԱՐԳ. ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՔ

ԴԸՍ Ա.

ՈՐՈՆՔ ԲՆՈՒԵՑԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԴՐՈՒԹԵԱՆ

ԵՒ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սարկաւագ	Սարտիրոս Սալդարացի.	Ա.	Սրցանակ
"	Վրիգոր Լըզընկացի.	Ա.	"
"	Խաչատուր Նարեկացի.	Գ.	"
"	Խաչատուր Սալաթիացի.	Բ.	"
Ուրարակիր	Բարսեղ Պօլեցի.	Ա.	"
"	Բարսեղ Բաղիշեցի.	Գ.	"
"	Սանուկ Թրակացի.	Ա.	"
"	Վէորդ Շուշեցի.	Հիւանդ.	

ԴԼՍ ԵՐԿՐՈՐԴ

ՈՐՈՆՔ ՔՆՆՈՒԵՑԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Սարկաւադ	Պօղոս Վանեցի .	Բ .	Սըցանակ
Ուրարակիր	Կարապետ Պարտիզակցի	Գ .	”
Դպիր	Յովհաննէս Յամթեցի .	Բ .	”
”	Յակոբ Կեսարացի .	Բ .	”
”	Թովմաս Յամթեցի .	Ա .	”

ԴԼՍ ԵՐԿՐՈՐԴ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ՄԵՋ

Ուրարակիր	Սկրտիչ Լըբեւանցի .	Ընթաւական .
Դպիր	Լսայի Կեսարացի .	Հիւանդ .

Բ . ԿԱՐԳ . ԱՇԱԿԵՐՏՔ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ

ՆՈՐ ԴՊՐՈՑԻ

ԴԼՍ ԱՌԱՋԻՆ

ՈՐՈՆՔ ՔՆՆՈՒԵՑԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ԳԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԵՋ

Ընթսան Սրապեան Կէյլէցի .	Ա .	Սըցանակ
Յակոբ Լնուչեան Պօլսեցի .	Բ .	”
Տաճատ Պէյլէրեան Կէյլէցի .	Բ .	”

ԴԼՍ ԵՐԿՐՈՐԴ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Բ . ՄԱՍԻՆ, ԲՆԱԿԱՆ ՔԱՆԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ,

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Գրիգոր Սահակեան Կեսարացի .	Ա .	Սըցանակ
Կարապետ Յարութեան	”	Գ .
Գրիգոր Բարսեղեան	”	Գ .
Կարապետ Քէջլեան Լըդոկիացի .	Գ .	”

Վննութիւնը լրանալէն յետոյ ամ-
սոյս 3 ին Ս. Վարդանանց տօնախմբ-
ութեան օրը, ըստ սովորութեան
Ս. Լ. Թոռոյս՝ սրբաբազմութեան
հանդէսը կատարուեցաւ նախագա-
հութեամբ Լ. Ժենապատիւ Սրբազան
Պատրիարք Հօր. ուր բաց ՚ի հա-
սարակ ժողովուրդէն և բարեպաշտ
ուխտաւորներէն, յատկապէս հրա-
ւիրուած էին Ս. Եմ. Իզդէթ փաշայն
իւր սարագայիւքը, Լ. Եգիպոս, Վաղ-
ղիոյ, Լ. Խաթրիոյ, Բրուսիոյ, Լ. Ժերի-
կայի և Սպանիոյ մեծապատիւ հիւ-
պատոսները, բաց ՚ի Ս. Եքսիկայի աւե-
րութեան հիւպատոսէն որ բացակայ
էր: Բոլոր այս ականաւոր անձինք-
ները իրենց թարգմաններովը փու-
թացեր եկեր էին. իսկ Ս. Եմ. փա-
շայն անձնական տկարութեան մի
սրտաճառաւ չը կրնալով գալ, ինք-
նագիր ներողագրով մը իւր սրտին
ցաւը յայտնելով փոխանորդաբար
խրկած էր Ս. Եմ. Լ. Խիւս փաշայն և
Ս. Եմ. Սանայէ Էփէնտին: Հանդէսը
սկսաւ աշակերտաց մի քանի քաղցրե-
ղանակ ազգային երգերով. յետոյ ա-
ռաջին դասու աշակերտներէն երեքը
մէկ մէկ հայերէն լեզուով ծառ կար-
դացին՝ քաղցր երգերով ընդմիջեալ:
Լ. Եգիպոսը չորրորդ ծառ մը տաճ-
կերէն լեզուով. վերջապէս գաղղիե-
րէն լեզուով ծառ մի եւս կարգաց-
ուեցաւ ՚ի պատիւ մեծարոյ հիւպա-
տոսաց, զոր ազգային արտաքին վար-
ժարանի աշակերտաց մէկը խօսեցաւ
՚ի մեծ գոհունակութիւն եւ ըրոպացի
հանգիստականաց:

Դառերը տւարտելուն Լ. Ժենապա-
տիւ Սրբազան Պատրիարքը ոտքի եւ
նելով և Ս. Եմ. Գաշային չը կրնալ
գալուն պատճառը բացատրելով,
տաճկերէն լեզուաւ համառօտ ատե-
նախօսութիւն մի ըրաւ, որուն մէջ

կը յայտնէր ուսմանց բարգաւաճե-
լուն օգուտները եւ սոցիալութեան
նորկալի հետեւանքները: Նախորդ
քանի մի դարերը ներկայ դարուս
հետ բաղդատելով, անցելոյն մէջ քա-
ղաքականօրէն շատ բաներու մէջ եւ
մնացած ըլլալը, և ներկայիս մէջ աչ-
խարհաշինութեան եւ քաղաքակրթ-
ութեան նոր ոգին յիշելով, գե-
ղեցիկ հետեւութեամբ ցըցուց՝ թէ
այս բարիքները բոլոր գիտութեան
և ուսմանց արգասիքներն են, զոր
կը վայելեմք ներկայ սերունդս՝ Ս. Ե-
հափառ և առատագութ Սուլթանին
ոչ միայն արտօնութեամբը, այլ եւ
քաջալերութեամբը: Հայոց ազգս
ալ միւս հպատակ ազգաց պէս, եւ
գուցէ իւր հաւատարիմ ծառայու-
թիւններովը անոնցմէ աւելի վայե-
լեց և կը վայելէ Նորին Ս. Եմ. Եհափառու-
թեան շնորհքները: Լ. Ենոր արտօնու-
թեամբն է, յարեց Սրբազան հայրը՝
ցուցնելով ճեմարանիս հաստատու-
թիւնը, որ Ս. Լ. Թոռոյս Ուխտը ար-
ժանի եղած է այսպիսի հոյակապ ու-
սումնարան մի ունենալու: Լ. Ենոյ
փոխարէն կը պարտաւորիմք ուրեմն
մենք ալ համապատասխանել անոր
գովելի ջանիցն ու նախանձաւորու-
թեան, և բարեպատեհ առիթը չը
կորսունցընելով մշակել հարկաւոր
գիտութիւնները, որոնք պատիւ կը
բերեն Նորին Ս. Եմ. Եհափառութեան, և
պարծանք Ս. Ուխտիս եւ համօրէն
ազգիս:

Սոյն ատենախօսութենէ ետքը Ս.
Լ. Խիւս փաշայն եւս ոտքի վերայ եւ
նելով քաղցր ու մեղմ արտասանու-
թեամբ գրեթէ արձագանք ըլլալով
Լ. Ժենապատիւ Սրբազան Հօր ըսած-
ներուն, յայտնեց միանգամայն () գոս-
տափառ Սուլթանին և աւերութեան
անուրանալի երախտիքները զոր ըրած

է ազգիւս, և անոր հայրական խնամք-
ները զոր 'ի մասնաւորի ցըցուցած
է միշտ 'ի վարձատրութիւն խորին
հպատակութեան և հաւատարմու-
թեանը. և արդեւ անոնց փոխա-
րէն՝ երբէք չը ինայեր վեհանձնու-
թեամբ վարձատրելու արժանաւոր
ները: Ա' երջացուց խօսքը յորդորե-
լով զաշակերտները եւ զմիաբանու-
թիւնը յարատեւելու սոյն ընթաց-
քին մէջ եւ աւելի յառաջագիմու-
թիւններ ցոյց տալու: Ա' սեմափայլ
Սօնլա էֆէնտին թէպէտ և խօսքով
չը յայտնեց իւր շնորհակալութիւնը,
սակայն թէ՛ Սրբազան Հօր և թէ՛
Ա' սեմ. Ա' իւլա փաշային եռանդուն
խօսքերուն և անոնց ճշմարտութեա-
նը վերայ սիրտը փղծկելով, և քանի մի
քաղցր արտասուաց կաթիլներով եւ
առանձին կերպիւ յայտնեց հանդէ-
սին իւր սրտին վերայ ըրած խորին
զգացմունքը և Հայոց ազգին հրա-
պարակաւ ցոյց տուած երախտագի-
տութիւնը: Հանդէսը լրացաւ ծա-
փահարութեամբք և կրկին երգերով:

Հոս 'ի քաջալերութիւն աշակեր-
տաց արժան կը դատեմք տողել յիշ-
եալ հայերէն ճառին երկուքը և գաղ-
ղիներէն հանդերձ թարգմանութիւ-
նովը 'ի զուարճութիւն մեր եւրոպա-
ցի բաժանորդաց:

ԱՌՍԻՕՏԵԱՆՍ գեղածիծաղ Ար-
փին, որ մեր նախնեաց դիւցազ-
նական ոգւոյն յիշատակներու ա-
ւետեօքը կ'ողջունէ զմեզ, եւ ան-
մահ բնութեան սիրոյ և յուսոյ բրա-
բխներ իւր ծիրանածաւալ ճառա-
գայթններու ներքեւ ծածկած ունելով
կը մերձենայ, մեր սիրտը և մեր կամ-
քը դէպ 'ի եգեմալայրն Հայաստան
ուզղել, ուստի և Առաքելական բարձ-

րագահ Աթոռ գերահռչակ՝ առաջ-
նորդութեամբ իւրոյ փեսային՝ մեծի
Օջորաբաբելի՝ հրաւէր ցնծութեան
կը կարգայ Սիօնաբնակ Ազգայնոց,
Տօն ուրախութեան յորինել, որով և
նուաստս ալ ժամ բարեպատեհ առ-
նելով կը ներկայանամ այս երջանկա-
ռիթ Ատեանս, այն վեհ դիւցազանց
ազգասիրական ոգւոյն բորբօքը ներ-
կայիս մէջ տարփողել. հաճեցէք և
դուք Տեարք ձեր ուշադրութիւնը
առ վայր մի նուաստիս արտասանած
խօսքերուն դարձնել:

Չի կայ աշխարհիս մէջ նիւթա-
կան իր մը, որուն վրայ Արարչին
սքանչելեաց տպաւորութիւնը չի նշ-
մարուի, երբ մեր մտաց դիտումը
առ վայր մի երկնից կապուտակ կա-
մարին վրայ դարձնեմք, կը տեսնեմք
անհամար աստեղաց խումբը, որոց
ամեն մէկը իրենց փառփլուն և երփն
երփն լուսոյ շառաւիղները արձրկած,
տիեզերաց խաւարաստուեր խորշերը
կը լուսաւորին, և այն ճառագայթ-
արձակ Արփին, որ բնութեան բոլոր
գեղեցիկութիւնը ունի իր վրայ, իբ-
րեւ հզօր թագաւոր իր շքեղ կառ-
քը բաղման այն ամեն լուսաւոր մարմ-
նոց մէջէն ճանապարհ ընելով կը գե-
րազանցէ բոլորին ըստ առաւելու-
թեան լուսոյն: Այլ եթէ դարձնենք
ուշադրութիւննիս երկրագնտիս մէջ
գտնուած կենդանեաց, սլիտի տեւ
ներք անոնց վրայ ալ սարգապէս զար-
մանալի շարժում զգայութիւն և շն-
չաւորութիւն: Իսկ բնութեան փա-
ռաց պատկողը և Աստուածային ա-
րարչութեան վերջին կատարելու-
թիւնը կրող բանական մարդը իւր
մարմնայն բարեյարմար կաղմութեամբ
և անմահ հոգւոյն կարողութիւննե-
րովը մեր ուշադրութիւնը կը գրա-
ւէ: Արդարեւ Տեարք, մեծ է մարդ

և գերագոյն բոլոր երկրաւոր գոյա-
ցութեանց մէջ՝ երբ որ անոր բարո-
յականութիւնը ուղիղ ըլլայ, երբ
անոր գործոց նպատակը բնութեան
սխրտի կանոններուն համապատաս-
խանէ : Այսին զի մարդ ըստ անձնիչ
խանին ազատ ըլլալով՝ կը խորհի զայն
ինչ որ իր միտքը գրաւած ունի . կը
գործէ՝ զորն որ կ'ախորժէ . սիրոյ և
ատելութեան միմիայն կոպար ունի
իւր սրտին խայթը , և նպատակ ան-
դորր խաղաղութիւնը և երջանկու-
թիւնը . և որովհետեւ այս ձեռնար-
կութեանց մէջ ամեն մարդկանց զգա-
ցումը ու տրամագրութիւնը միա-
կերտ չէ , վասն որոյ կը հետեւի ըսել
թէ մարդկային ազգի բնաւորութիւ-
նը զանազան ճիւղերու կը բաժնուի ,
եւ ինչպէս որ իրօք ալ կը տեսնենք
միշտ : 'Ինքնութենէս երեւելի ճար-
տասանը , ազատութեան հոգւով զը-
րահաւորուած Արիստոքրատեան
կ'ելլէ , իւր հայրենիքը Փիլիպպոս մա-
կեդոնացոյն բռնութենէն ազատել :
Եւքինէսի արծաթսիրութիւնը գլուխ
վերցնելով Արդարութեան դէմ՝ Ա-
զատութիւնն դրոշակը խոնարհեցը-
նել կը ջանայ : Գեղազանգուրն Հայկ'
իր Ազատոհմը առած բաբիլոնեան
խառնակութենէն մեկնելով դէպ 'ի
Արեւելք խաղաղութեան օթարան
մը փնտրած ատեն , միւս կողմէն
ամբարտաւանութեան սէգ ոգին նու-
րա ետեւէն կ'ամրապնդի : Այն ինչ
'Իաւիթ Յեսսեան , Սիրոյ ջահը իւր
ձեռքը առած Իսրայէլեան տոհմին կը
ներկայանայ , միւս կողմէն ատելու-
թիւնը Սաուլը Վիսեանը իրեն անօթ
ունելով նորա դէմ կը մաքառի : Այս-
պէս տեսնուած են և կը տեսնուին
միշտ մարդկանց տարբեր և մէկմէկէ
օտար բնաւորութիւններ : Ինչպէս
նաեւ Քրիստոնէական երջանիկ դա-

րուս մէջն ալ աշխարհս այս երկու
ներհակակիր կիրքերու արդիւնքը վա-
յելեց , մանաւանդ երկիրս Հայոց ,
որոնցմէ ականաւոր եղաւ Արշակուն-
եան ցեղի Թագաւորութեան վեր-
ջանալուն միջոցները , որուն մէջ ե-
րեւելի հանդիսացաւ անյաղթելի և
քաջամարտիկ սպարապետն Հայոց
մեծաց սուրբն Արդան Սամիկոն-
եան՝ արիական մրցմունքներով չարա-
շուք Պարսկական սեւագունդ բանա-
կին դէմ , որոց կողմը անցած կը գրտ-
նուէր՝ անարժան Հայ անուան ու-
րացեալն Աստակ , իւր չարութեան
հնոցը սուրբ Եկեղեցոյ դէմ բորբո-
քելով . և անոր վեհալայր խորաննե-
րը Պարսկական պիղծ կրօնքին արա-
րողութեան տեղի առադրելու նպա-
տակաւ , ուստի Սամիկոնեան ազգի
փառքն և պարծանքն իւր խորհրդա-
կից ընկերներու հետ մահուան եր-
կիւղը իրենց սրտէն մէկդի ձգելով
Արքազան կրօնի պաշտպանութեան
համար Աւարայր դաշտը պատերազ-
մի ասպարէզի մէջ իրենց մահկանա-
ցու կեանքը կը կնքեն :

Հայաստանեայց ուղղափառ Եկե-
ղեցին սրբոց Արդանանց երախտիքը
չի մոռնալով , ամեն տարի անոնց յի-
շատակաւ արժանի Առաքինութեան
տօնախմբութիւնը ուրախութեամբ
կը կատարէ . և մէք ալ՝ որ այսօր նոյն
Առաքինեաց հանդիսի շնորհքը կը վա-
յելենք , արժան է երախտապարտ
սրտով մաղթել առ բարեգութն Աստ-
ուած որ իւր խնամքը միջնորդու-
թեամբ սրբոց Արդանանց ծաւալէ
Ազբանաղեանս ազգի վերայ , յարու-
ցանելով որդիս առաքինիս արժանի
սրբոյն Արդանայ . ոչ զէն 'ի ձեռին ,
այլ առաքինութիւն 'ի սրտի , և միան-
գամայն իւր ամենազօր Աջը հովանի
ունենայ միշտ Սրբոյ Աթոռոյս վրայ

նորին Սրբազան Գահակալին երկար
կեանս շնորհելով :

Խ. Ճ.

ՍԱՐԿԱԽԱՅ ԳՐԻԳՈՐ

ԵՐԶՆԿԱՑԻ

Տիեզերացս ընդհանուր յառաջա-
դիմութեան , և բանական էակացս
իրարու հետ ունեցած միութեան և
ընկերութեան առաջին և սկզբնական
տարրը Վրօնքը ըլլալով , և անկէ բըղ-
խած բարոյականութիւնը ամեն մե-
ծամեծ ազգաց և ժողովրդոց միապե-
տական , հասարակապետական և տա-
նուտերական խորխտ իշխանութեանց
բուն էութիւննին կը հաստատէ . և
անհիմն դարերու հնութեան մէջ
մինչդեռ մարդկային ազգի անհատ-
ները իրենց մահկանացուն կնքելով
կ'երթան կ'գրին յաւիտենական Վը-
դարութենէ սահմանուած տեղին ,
Վրօնքը դեռ եւս անհուն ժամանակ-
ներու մէջ իր յաղթանակը բարձրա-
գլուխ յառաջ տանելով մեր նախա-
հարց սերունդէն յառաջ եկած մարդ-
կային միակ ազգին զանազան ազգե-
րու բաժանումները յետնեալ սերուն-
դոցս կը ներկայացընէ՝ որոնց ազգու-
թիւնը իր ճշմարիտ բուն արմատէն
դուրս եզոզ անհարազատ ճիւղերուն
վրայ հիմնած անոնց հաստատութիւ-
նը և կացութիւնը կ'ապահովցընէ ,
և այն ազգերուն ներքին և արտա-
քին կացութիւնն ալ իրմէ բղխած
բարոյականութիւններովը կ'ուղղէ ,
և օրէնք կու տայ բնութեան , ար-
դարութեան , իրաւանց և պարտուց
դէմ չի մեղանշելու : Եւ այսպէս Վը-
րօնքին հզօր ներգործութիւնը եթէ
չի կրցաւ մարդկային ցրուեալ ան-
հատները ի մի ժողովել , դէթ անոնց

մէ մասնաւոր հանրութիւններ կադ-
մելով , անոնց լզգութեան անուն
տուաւ :

Երբ ընդհանուր երկրագնտիս մեծ
ու ահեղ փոփոխութենէն ետք ,
մարդկային հարուածեալ ազգը մե-
ծամեծ բաժանումներու ենթագրը-
ւեցաւ , մարդիկ ոտք ելան արեւել-
քէն հեռանալու . ձգեցին իրենց ծը-
նընդեան վայրը և երկրիս ներքսա-
գոյն կողմերը չուեցին իրենց բնա-
կութեան տեղի որոշելու : Տիեզե-
րացս անմարդաբնակ լռիկ մեջիկ վայ-
րերը՝ ուր դեռ եւս մահկանացու մը
ոտք կոխած չէր , փրով հիւրընկալե-
ցին մահկանացուաց այս տարաբաղդ
գաղթականութիւնը , և բնութեան
պարգեւած քարանձաւները , խոռոչ-
ները և խոր անտառները իրենց բը-
նակութեան տեղի նուիրեցին : Եւ ե-
լի թշուառագոյն վիճակի մը պիտի
մատնուէր մարդկային սերունդը՝ ե-
թէ այս վայրենութեան մէջ իր ծագ-
ման յիշատակը վերստին նորոգելու
առիթները չողջունէր զիրենք , եթէ
այս անասնօրէն կենակցութեան մէջ
դեռ եւս իր օրերը երկարատեւէր ,
վերջապէս եթէ իր միութեան և ազ-
գութեան ամբողջութիւնը կազմելու
առիթ չըլլար Վրօնից բարոյականու-
թիւնը : Եւ մանակին սահուն վայր-
կեանները չը պիտի տային՝ որ բանա-
կանութիւնը իր խորին քունէն ար-
թըննայ , թող չը պիտի տային , որ
զինքը չըջապատող թանձր վարագոյ-
րը մէկդի առնու . չը պիտի ներէին
վերջապէս՝ որ մարդկային իմացակա-
նութիւնը իր հանձարաւոր ներգոր-
ծութիւնները ի դործ դնէ , և այն
առնէ մարդիկ իրենց քայլափոխները
միօրինակ շարունակութեամբ պիտի
ուղղէին աւելի սոսկալի և վայրագ
վիճակներու , ուր ոչ ազգութեան ,

նչ մարդկութեան և ոչ իսկ բանակա-
նութեան ամենափոքրիկ կայծ մը ան-
գամ պիտի նշմարէին իրենց վրայ .
այլ սոսկ կերպարանքով մը վրիժառու
գազաններու նման զիրար հալածէին ,
մէկզմէկ հարուածէին , մէկզմէկու
արիւն խմէին . վերջապէս իրենք զի-
րենք անբան գազաններուն կարգը
համարելով ոչնչութեամբ յաշխար-
հէս անհետ ըլլային առանց մարդ-
կութեան ամենափոքր յիշատակին
անգամ երկրիս վրայ մնացորդ թողե-
լու :

Այս սոսկ ամեն հարուածոց , այս
ամեն թշուառութիւններուն դէմ՝
որոնք իբր երկնատեղաց շանթ մը ա-
պիկար մահկանացուացս գլուխնե-
րուն վրայ կը տեղային , ախոյեան կը
կանգնի Արօնքը և իրմէ յառաջ եկած
բարոյականութիւնը . բանականու-
թեան դէմ մաքառող ժամանակին
դառնութիւնը կը ջնջէ . կը կանգնէ
արիութեամբ իր վսեմ յաղթանակը
անոր կեդրոնատեղին . կ'ընդմիջէ ա-
նոր փախուստը , և մարդկային իմա-
ցականութեան ազդու ներգործու-
թիւնները 'ի դատ կը հրաւիրէ . կը
բանայ լայն ու ընդարձակ ասպարէզ
մը , խորհել կու տայ անցեալ ու ներ-
կայ ժամանակներուն վրայ և ապառ-
նի ժամանակէն զգուշացընելու յոր-
դոր կը կարգայ . կը ճանչընէ իրենց
մէ ծածուկ եղած գանձի մը մեծու-
թիւնը և հարստութիւնը՝ որով կ'ուղ-
ղէ բանավարութիւննին , կը սանձէ
գազանութիւննին և թուաւոր հան-
րութիւններ կազմելով անուն կու
տայ ազգ եւ ժողովուրդ , եւ անոնց
հաստատութիւնը և կացութիւնը իր
վրայ կը հիմնէ , և ինքը կ'սկսի ա-
ռաջին քայլափոխները ընել բանակա-
նութեան յառաջագէմ ասպարէզը ,
ուսկից արդիւնաւորելով զանազան

ազգեր օր ըստ օրէ մեծամեծ յառա-
ջագիմութեանց հասու ըլլալու բաղ-
դը կ'ունենան :

Այս ըսածներս ապացուցանելու
համար թողլով Աստուածուստ ներ-
շնչեալ ճշմարիտ Արօնի սքանչելի
ներգործութիւնները , մեր մտաց տե-
սութիւնը դարձնենք նախնի գա-
րուց վրայ . ուր իմաստուն մարդիկ
(բնուստ) ճանաչելով Արբազան Արօ-
նի մը բարոյականութեան կարեւո-
րութիւնը և չը կրնալով գտնալ զայն՝
ըստ քմաց իւրեանց յուշկապարիկ
կազմուած մտացածին տրամադրու-
թեան մը Արօնք անուն առաւ ինչ
սքանչելիքներ գործեցին խումբ մը
մարդկանց մարդկութեան և բանա-
կանութեան ոգի տալով , որոնց գրե-
թէ իմացական կարողութեան նշոյլ
անգամ չէր մնացած :

Արեւելին Յունաստան՝ երբ իր
բնակիչները բոլորովին իրենց մարդ-
կութեան յիշատակը մոռացեր էին և
իրենք զիրենք երկրածին կ'անուանե-
ին , չունէին ոչ քաղաքականութիւն ,
ոչ ազգութիւն , ոչ մարդկութիւն և
ոչ իսկ բանականութիւն : Ինակա-
րանին , հագուստին , կերակուրնին
և ուրիշ ամեն բաներնին անասնոց
նման էր . խոր անտառներու մէջ ի-
րարմէ հեռի վայրենօրէն արջերու
մէջ կ'ապրէին : Այսպիսով՝ Ագիպտոս
սէն կ'ելլէ Յունաստան կը հասնի և
կը տեսնէ Ատտիկէի մէջ մարդկային
ազգին խեղճ և ցաւալի վիճակը , կը
փութայ զանոնք 'ի մարդկութիւն որ-
սալու . և որպէս զի իր ձեռնարկու-
թիւնը 'ի գերեւ չելլէ , իմաստուն
խորատով մը կը կանգնէ Արամազդայ
սեղանը և զոհ կը մատուցանէ իբր
դերագոյն էակի մը : Այս սքանչելի
տեսարանը՝ ուսկից Արօնի մը սրբա-
զան սեղուած օրէիքները կը բղկէ-

ին, այն վայրենի մարդոց սիրտը կը գրաւէ. կը սկսին խառն 'ի խուռն բազմութեամբ յաճախել դէպ 'ի սեղանը, ուր առաջին անգամ մարդկութեանս շնորհուած լեզուին պաշտօնը 'ի գործ կը գնեն իրենց սրտին պատճառած քաղցրիկ զգացումը բերանացի արտայայտելու: Արօնի աղաւթութիւնը իրենց սիրտը ու խիղճը գրաւելով՝ կ'ուզէր և կը շրջէ անոնց միտքը 'ի բանավարութիւն և անոր մատակարարած բարոյականութիւնը կը ծանցընէ մարդկութեան, ընկերութեան և ազգութեան բառերուն շանակութիւնը: Այսպիսով ժողովրդական Արօնից վրայ այս ջերմ զգացումը տեսնալով՝ անմիջապէս նոյն հաստատութեան վրայ Արամազդոյ դրստերը Աթենասեայ իմաստուն Արցունհայն սեղանը կը բարձրացընէ անոնց խրթնացեալ իմացականութիւնը ուսմամբ և գիտութեամբ պոյծառացընելու. և այսպէս Արամաստան օր ըստ օրէ իր քայլափոխները դէպ 'ի յառաջագիմութիւն ուղղելով՝ այն երկիրը՝ որ երբեմն մարդակեր գաղտններու որջ մը ձեւացած էր, քիչ մը ետքը Հոմերոսի, Սկրատոյ, Պլատոնի, Արիստոտելի, Տիմոնի, Պլուտարքոսի և ուրիշ մեծ և երեւելի փիլիսոփայից որորան կը հանդիսանայ:

Այսպէս ալ Հռովմ գեռ եւս իր նոր հիմնարկութեան ժամանակ իր մէջը խառն 'ի խուռն խուռաններու բազմութիւն մը կը ներկայացընէր, որոնք բանականութենէ զուրկ զգալի էակներ միայն ծանցուած էին. աւելեքն ալ առանձնութեան մէջ տիրապետող գաղանային կրից տէր եւ սլանդակ հրէշներ էին: Հռոմուրս Հռոմայ առաջին հիմնադիրը չստուածոց սեղան մը կը կանգնէ և զո-

հագործութիւններ կը հաստատէ. և կ'ուզէ այն խուռաններուն իշխանական զօրութեամբ իրենց բանական ըլլալին ծանցընել տայ. ուստի փոխանակ Արօնից ազգու զգացմամբ անոնց ուշը գրաւելու՝ իրեն զօրութեանը և իշխանութեանը փառհանալով՝ զէնք կը վերցընէ վայրասուն մարդկանց դէմ. և փոխանակ 'ի բանականութիւն և 'ի հնազանդութիւն որսալու և նուաճելու, եւս առաւել կը գրգռէ անոնց անբանացեալ կրից ցասումը և առանց օգուտ մը քաղելու երկարատեմ կը պատերազմի: Իսկ իրեն յաջորդը՝ Աուամ Պոմպիլիոս կը թողու զէնքը, կը թողու վրիժառու ոգւոյ ցասումը, կը ներէ և կարեկից կ'ըլլայ անոնց տմարդութեանը, և հմուտութեամբ իր ձեռնարկութեան առաջին սկզբունքը կընէ Արօնի մը սրբազնութիւնը ծանցընելու: Արօնքը իր ամեն գործոց մէջ նախապատիւ կը համարէ, և իր ասենարանութեան առաջին բառը Արօնք կը գոչէ՝ անով այն վայրենացեալ ժողովրդեան բազուկները կը թուլանան, կը թողուն զէնքը և զիրար եղբայր կ'անուանեն: Աուամ գեռ եւս իր արքայական գահը չբարձրացած յաճախել կու տայ մուղիլդեան նաեւ իմաստութեան գիցունհայն պաշտօն մատուցանել, և հետզհետէ ուսման եւ դաստիարակութեան հետեւելով՝ կը լուսաւորէ անոնց անբանացած իմացականութիւնը, ծանցընել կու տայ մարդկութիւնը, մարդկութեան պարսպն եւ իրաւունքը. արգարութեան օրէնքները, մարդասիրական բնական իղճը, սիրոյ և միութեան յարգանքը. և այսպէս օր ըստ օրէ անոնց յառաջագիմութեան նեցուկ ըլլալով՝ ազգը՝ ազգ, ժողովուրդը՝ ժողովուրդ և

մարդը՝ մարդ ընկելու ուղւոյն կ'առաջնորդէ անոնց քայլափոխները :
 Արդ՝ եթէ ընդհանուր առմամբ նախնի ազգաց և ժողովրդոց պաշտած Կրօնքները, որոնք մարդկային մտաց ճնունդ բլբլով՝ հազիւ բարոյականի մը ճշմարտութեան ամենափոքրիկ կայծը իրենց փրկարացող կանթեղին մէջ կը ցոլայր, և այնչափ հաստատութեանց եւ յառաջագիմութեանց պատճառներ ևզան, հապաքանի՜ առաւել Քրիստոնէութեանս ճշմարիտ և Կառուածային Կրօնը, որուն ճշմարտութիւնը հաստատելու համար յարացողներու չենք կարօտիր. եւ այս ճշմարիտ Կրօնիս այն կեղծ կրօնքներէն աւելի գերազանց կերպիւ մարդկային ազգին երկու կենաց օգտին համար յառաջ բերած սքանչելի արդիւնքները և գործքերը արեգակի նման կը փայլի. զի եթէ այն կեղծ կրօնքները փայրենի մարդիկները իրենց խռոջներէն դուրս հանեցին և իրենց բանական և մարդ բլբլին ճանչցուցին, Յիսուսի ճրջ մարիտ Կրօնը կրկնապատիկ առաւելութեամբ զանոնք պայծառացայց և բանականութեան իմացական լոյսը Հողւոյն Արքայ շնորհօք փայլեցընէ. լով յառաջագէմ ձեռնարկութեանց գործնականապէս ձեռն մխելու առ :
 Եթէ այն սնտոի կրօնքները մարդկային ազգը մասնաւոր խումբերու կազմեցին իրարու անծանօթ, Յիսուսի ճշմարիտ Կրօնը անհամար ազգերու վրայ իր յաղթանակը կանգնած Քրիստոնէաց անունը ստորագրելով ամենքը մէկ և զոքայր բուռ : Եթէ այն Կրօնքները միայն իրենց բարեկամը և սիրելին սիրել հրամայեցին, Յիսուսի ճշմարիտ Կրօնը կրկնապատիկ առաւելութեամբ իր նմանին և թշնամին յիրել կը հրամայէ : Եթէ

այն Կրօնքները հզօրին միայն խոնարհել սորվեցուցին, Յիսուսի ճշմարիտ Կրօնը ազատութեան դրօշը բարձրացուցած իրաւանց միայն խոնարհելու անհրաժեշտ հարկը կը ճանչցընէ :
 Վերջապէս՝ եթէ այն Կրօնքները օրէնք կու տային մարդոց իրենց անձը միայն պաշտպանելու, իրենց անձին միայն բարիքը հոգալու, Յիսուսի ճրջ մարիտ Կրօնը իր նման այն օգտին համար մինչեւ անգամ ամեն անհատի իւր անձը չը խնայելու դասը գործնականապէս կը սորվեցընէ :

Եհա այս Ս. Կրօնի հուրն էր որ փռեց և բորբոքեց Ս. Վարդանայ Մամիկոնէի սիրտը. այս Յիսուսի ճշմարիտ Կրօնի զօրութիւնն էր որ իր անձը, իր ընկերը, իր ազգը եւ իր հայրենիքը պաշտպանելու համար զէնք վերցընել կու տայ իրօքս և անկրօն թագաւորի մը դէմ : Քաջ գիտէր Ս. Վարդան՝ զի երբ Յիսուսի և օրբազան Բռաբեւոյց և սրբոց Հարց հիմնած Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյ աստուածատուր Կրօնքը Հայաստանէն վերնայ, երբ Յիսուսի հիմնած և հաստատած նը Կրօնը իր վերջին հրաժարականը տայ Հայաստան աշխարհի, երբ իր արխուր բարեւները մատուցանէ թաղէոսի և Բարթուղիմէոսի, Գրիգորի, Երիստակէսի, Եւրօսի, Սահակոյ եւ Անարովայ շքեղ եւ վեհ գամբաններուն և անոնց ածիւնացեալ պատուական սուրբ նշխարացը, Հայաստան խիտ թշուառ վիճակի մը մէջ պիտի դրընէ : Հայր իր ազգութիւնը, իր միութիւնը, իր մարդկութիւնը, իր բանականութիւնը, իր նախնեաց փառաւոր յիշատակները, մինչեւ անգամ իր անունը բոլորովին պիտի կորսնցունէր գարեբու հնութեան մէջ և իր մէկ յիշատակն

անդամ աշխարհիս մէջ չը պիտի մը-
նայր : Ըհա՛ ասոնց համար Ս. Վարդան
արիւթ թեամբ Կրօնի և Ըղբին
նախանձութիւն վառուած զէնք կը վեր-
ցնէ Զայաստանեայց ուղղափառ
Իզատուորչական Ս. Իսկզեցւոյ թըշ
նամեայ գէմ. կը ժողովէ իր քաջերը,
կ'իջնէ Ըւարայրի գաշար, հոն ծա-
կատ առ ծակատ Պարսկի բանակին
հետ կը մրցի, կը ջախջախէ անոնց զո-
րութիւնը, կը շրջէ կը տապալէ ան-
աստուած կրօնից գրօշակը, կը կանգ-
նէ արիւթ թեամբ Զիսուսի շնորհած
ճշմարիտ Կրօնի յազմանակը սրտե-
րազմի գաշափն մէջ, ուր ինքը իրեն-
ներուն հետ արիւն կը հեղուն. ի-
րենց անձեքնին կը զոհեն Կրօնի և
ազգի փրկութեանը համար, և իրենց
վերջին շունչը Զիսուսի Կրօնի ծիրո-
նափայլ գրօշակին տակը կ'աւանդեն,
որով մինչեւ այսօր Զայն ալ իբր ազգ
պարծենալու փառքը ունեցեր է, և
որով Զայաթիւնը իր ամբողջութիւ-
նը կազմող կապը ամխզելի պահելով
ապահովեց իր ապագայ հաստատու-
թիւնը, յարգարեց իր ապառնի շա-
ւիղը ճշմարտութեան ճանապարհին
մէջ, և հիմայ բոլոր քաղաքակրթեալ
ազգաց առջեւ ներքին համադմար
անոնց համակրութիւնը և յարգանքը
գրաւելու տրամադրութեան մէջ է.
թեւեւ Զայը չունի իշխանութիւն,
չունի տէրութիւն, բայց ունի Կրօն
մը, Կրօն մը՝ որն որ հին դարերէ 'ի
վեր իր կացութիւնը կը ճշմարտէ և
ինչպէս հիմայ այս ներկոյ դարուս
մէջ Զայ ազգը աշխարհիս կը ներկա-
յայրենէ :

Ըրդ՝ Եղբարք, մենք որ նրահա-
տակաց արեամբ պաշտպանուած նը
Կրօնը իբրեւ հայրենի մասնագու-
թիւն մը պահած եմք անրիծ և ա-
նարատ մինչեւ յայսօր, և պիտի պա-

հենք մինչեւ մեր կենաց վերջին շուն-
չը, հարկ համարենք մեզի որ այս Զի-
սուսի Կրօնի սրբութեան սեղանակից
մեր իմացականութիւնը լուսաւորող
իմաստութեան սեղանն ալ կանդ-
նենք, ինչպէս երբեմն Կիպրոսոյ Ըտ-
աիկէի մէջ և Կումայ Ըւովմի մէջ
Ըրամաղդայ սեղանին հետ կանգնե-
ցին Ըթենասոյ իմաստութեան շա-
տուածահւոյն սեղանը : Կղբարք,
նոյնը կը սրբաւարտորիմք և մեր այսօր
ընել որ Կրօնի նախական սրբու-
թեան սեղանոյն քով բարձրանայ մեր
իմացականութիւն անուշահոտ խուկիւր
և ծխի բարդ 'ի բարդ մինչեւ տիե-
զերացս անհունութեան լոյնածա-
ւալ տապարեղին մէջ :

Փառք և գոհութիւն Ըրարչին,
ունիմք այսօր այնպիսի բարերար մը,
ունիմք այնպիսի երախտաւոր մը,
որ իր բարձր գահակալութեան օրէն
'ի վեր այս սկզբունքը յարգելով իր
խնամքը տարածած է մեր վրայ, և
որուն ամեն ճիգը, ամեն ջանքը եւ
բոլոր աշխատութիւնը զմեզ 'ի նոյնս
կրթելու և դաստիարակելու համար
է. ինչպէս և այսօր զմեզ քաջալերե-
լու համար մասնաւոր պարգեւա-
բաշխութեամբ կը վարձատրէ մեր
գուղնաքեաց աշխատութիւնները, որ
այս ամենուն փոխարէն կը պարտա-
ւորիմք մենք ալ մեր ամեն ճիգը թա-
փել ուսման յառաջը իմութեանը հա-
մար, և մեր յատկացեալ դասուց եւ
կրօնական բարոյականութեանց մէջ
յառաջադէմ քայլափոխներ ընելով՝
մեր սիրելի ազգին և Սրբազան Զօր
յոյսերնին պատկելու բախդը ձեռք
բերեմք :

Եւ դուք Սրբազան Զայր, ընդու-
նեցէք աշակերտելոյս անկեղծ սրտից
քաղցրիկ զգացումը, զոր կը մերկա-
նամք առաջի Ըստուծոյ, և կ'ախ-

տեմք ՚ի բոլոր սրտէ մեր աշխատու-
թիւնը երբեք չը խնայել ազգիս եւ
սրբոյ Աթոռոյ օգտին համար, եւ
ինչպէս մեր կեանքը ու անձինքը զ-
հաճ եմք ՚ի փառս Աթոռածոյ, նոյն
պէս մեր սիրտը և կամքը պիտի զ-
հեմք Ձեր Հայրական կամոց ար-
դար և օրինաւոր իրաւասութեանց :
(Օրհնէ ուրեմն, Արքայան Հայր :

Ձեր առաքելական օրհնութեամբ մեր
նուտատագոյն աշակերտելոց խումբը,
որով գորդացեալ ապագային ազգիս
և Ա. Աթոռոյ գործակատար ծա-
ռայներ ըլլանք :

Խ . Տ .

Ո . ԲԱՐՍԵՂ ԱՆԱԶՄԱԼԵԱՆ

ՊՕԼՍԵՑԻ

La magnificence de cette solennité, et la pré-
sence si glorieuse et si encourageante de votre
Eminence me causent vraiment une admiration
extraordinaire, et m'inspirent un sentiment coura-
geux pour me représenter devant cette assemblée
honorable et en témoigner publiquement la joie
de mon cœur.

Les princes et les rois qui étaient zélés de la
progression nationale et amis des sciences dans les
différents siècles, en voulant essayer les sueurs de
ces instituteurs très-diligents et trop appliqués aux
études, et récompenser leurs travaux actifs, en les
remerciant toujours au contentement public, et
encourager la réunion des étudiants, ce n'était
sans doute qu'une conception des sages conseils de
l'intelligence humaine; comme jusqu'à présent
même. Car les solennités nationales qui avaient
lieu de temps en temps par une grande magnifi-
cence, rendaient une impulsion non moins progres-
sive d'un marche à l'autre. Naturellement un ef-
fet produit avec beaucoup d'effort, quoique défec-
tueux, l'applaudissement public du moins le per-
fectionne autant qu'il est possible. Que chacun en
cherche la preuve dans ses profonds sentiments.
Nous laissons à part l'histoire des nations, dont
la position a dignement fixé sur elle l'attention de
notre siècle, et connue et estimée comme un vrai
maxime, comme on la voit aujourd'hui et on la
prône par le fait même chez toutes les nations é-
clairées et civilisées.

Donc, la nation Arménienne par la sollicitude
très-compassante et la protection de Sa Majesté Le
Sultan, a, dans des circonstances particulières non
seulement comme une simple nation, mais encore
comme une nation civilisée, le privilège de courir
ensemble au progrès. Elle a aussi le privilège de
ces solennités nationales qui élèvent honorable-
ment le front éclairé de la science, et dont la douce
activité nous charme actuellement et nous fait ap-
plaudir joyeusement dans cette Institution magni-

Հանգէսիս շքեղութիւնը և Ամենապատիւ Սրբ.
բայնութեանդ փառաւոր և քաջաբերական ներկայու-
թիւնը՝ արդարեւ արտաքոյ կարգի զմայլում մի կը
դասաճառեն նուաստիս, և քաջաբերական զգացում մը
կ'ազդեն ինձ՝ սոյն պատկառելի հանգիսիս ներկայա-
նալու և հրապարակաւ արտիս ուրախութիւնը յայտ-
նելու :

Չանաղան դարերու մէջ ազգային յառաջդի-
մութեան նախանձախնդիր և գիտութեան բարեկամ
իշխաններ և թագաւորներ ուզելով որ ուսման աս-
տիկ ջանադիր մշակաց քրտինքը արբեն և անոնց փոյ-
թեւադէն աշխատութիւնը վարձատրեն, անոնցմէ
միշտ շնորհակալ ըլլալով՝ ՚ի դստնականութիւն հասա-
րակութեան, և ուսանողաց խումբը քաջաբերէ, ան-
շուշտ մարդկային հանճարոյ իմաստուն խորհրդոց ծը-
նունդն է և է ցարդ իսկ : Որովհետեւ ժամանակ ժա-
մանակ ազգային հանգէտները, որ մեծ շքեղութեամբ
կը կատարուէին, ոչ սակաւ քոյրափոխէ մը առ քոյ-
րափոխ յառաջանալու մղիչները կ'ըլլային. ըստ որում՝
բնականաբար ժիր ջանքով արտագրուած դործ մը,
որչափ ալ անկատար ըլլայ, գէթ հանրութեան մէկ
ծափահարութիւնը զայն որչափ որ կարելի է կատա-
րելագոյն վիճակի կը հասցնեն. որուն աստղացող ու
մեն անհատ իւր խորին դժոյքմանց մէջ թող լին-
արուէ : Թողլով ազգաց սրտմաւթիւնը սրաց այն
գրութիւնը նոր դարուս ուշագրութիւնը արժանա-
պէս գրաւած և իրեն ճշմարիտ սկզբունք ճանչ-
ցուած ու յարգուած է, ինչպէս որ այսօր կը ձեռ-
նուի և կը քարոզուի դարձով իսկ բոլոր լուսաւոր-
եալ և քաղաքակրթեալ ազգաց մէջ :

Իսկ արդ՝ Հայ ազգն ալ Օսմանեան Միջնախա-
նութեանն առատաբաւթ խնամքը և սրաշարժնու-
թեամբ ոչ միայն իրեն լոկ ազգ, այլ իրեն լուսա-
ւորեալ ազգ մասնաւոր սրաշարժներու մէջ յառա-
ջագիտութեան համընթաց քայլելու արտօնութիւնն
ունի. ունի նաեւ գիտութեան լուսաւոր ձախար-
յարգանքը բարձրացնող ազգային հանգէտներու ար-
տօնութիւնը, որոյ քաղցր ներգործութիւնը ներկա-
յիս մէջ իսկ զմեզ զմայլեցնելով՝ վիճալայր յարկիս
մէջ ծափահարել կու տայ մեզ, և որուն գործէթը մեր

fique, dont la coupole nous repète sans cesse les contre-coups de nos applaudissements. Nous sommes vraiment très-obligés et très-reconnaissants à Sa Majesté Le Sultan et à Son Excellence le Pascha, digne Représentant de Sa Majesté, qui daigne aujourd'hui honorer notre solennité et l'honorable Assistance par la désirable présence de Son représentant. De même Messieurs les Consuls, qui daignent d'assister à cette solennité de la distribution des prix.

Donc, Honorable Messieurs! adressons nos vœux les plus ardents au ciel pour la conservation des jours précieux de Sa Majesté l'Empereur. Puisse la Providence exaucer nos vœux, et étendre ses Mains protectrices sur cet Auguste Monarque qui accorde non seulement un libre privilège dans toutes les entreprises progressives de notre chère nation, mais plus encore nous inspire de l'encouragement. Souhaitons-nous même des jours longs et heureux à Son Excellence le Pascha de la Terre Sainte, qui en partageant les sentiments de Son Auguste Souverain, cherche tout indifféremment à faire faire des progrès à toutes les nations sujettes.

Monseigneur

Daigne votre Eminence d'agréer les remerciements de mon plus profond respect, et les sentiments de haute considération que je vous présente humblement de la part de tous ceux qui vous sont très-reconnaissants.

JEAN. T. KALPAKDJIAN
ÉLÈVE DE L'INSTITUTION
NATIONALE ARMÉNIENNE
▲ JÉRUSALEM.

Ժամհարութեանց արձագանքը անդադար կը կրկնէ: Արդարեւ կարի երախտագէտ և շնորհապարտ եմք Նորին Վեհափառութեան Մեծի Սուլթանին և Նորին Սեփականութեան արժանաւոր Ներկայացուցիչ Վեհափայլ Վաւականին որ կը բարեհաճի պարօր պատուել զհանդիսագիրս և զհանդէսս իւր փոխանորդին փափաքելու ներկայութեամբը. նշնպէս և Պ. Հիւպատոսաց, որք կը բարեհաճին հանդիսատես ըլլալ պարզեւարաշխութեան հանդիսիս:

Ուրեմն Սեփարոյ Տեղաբ. մեր ջերմ մաղթանքները յերկինս ուղղենք ի պահպանութիւն անդին կենաց Նորին Վեհափառութեան կայսեր: Հաճեցի՛ր Նախախնամութիւնը ընդունել մեր սրտին ուխտերը և տարածել իւր զօրավիգ անը Օգոստափառ Ինքնուկային վերայ, որ մեր ազգին յառաջադիմութեան շարժառիթ եղող ամեն գործառնութեանց մէջ ոչ միայն կը շնորհէ ազատ արձանութիւն, այլեւ կը քաջաբերէ: Երջանիկ և բարօր կեանք մաղթենք նաեւ Ս. քաղաքիս Վեհափայլ Վաւականին, որ իւր Օգոստափառ Վեհապետին համարժիտ կը ջանայ հպատակ ազգաց յառաջադիմութեանը անխորաբար:

Սրբազան Հայր:

Թող հաճի Ձեր Սրբազնութիւնը ընդունել իմ խորին մեծարանայ շնորհակալութիւնները և մեծի ակնածութեան այն զգացմունքները, զոր կը մատուցանեմ խնամհարաբար ի զիմաց անոնց՝ որք կարի երախտապարտ են ձեզ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՐՈՍ
ԽԱԼԲԱԽՃԵԱՆՑ

Աշակերտ Խաչայիկ Հարժարանի
Երդասաղէմայ:

Վեհափայլ Իզդէթ փաշայն որքան որ չկրցաւ ներկայ գտնուիլ հանդէսիս, այսու ամենայնիւ լսելով Սուրբ Լեթուցոյ Դպրոցի աշակերտաց ըրած յառաջադիմութիւնները, սաստիկ ուրախանալով, յետագայ շնորհակալութեան և քաջալերութեան գիրը խրկած էր Վեննապատիւ Սրբազան Պատրիարք Հօր:

Չօճուգլարըն օգուտու գլարը տէրս: Լերինատէն վերադարձի ճէվապ տօգլ: Իսի կէնտուլերին ֆէթանէթ ու զալ: Բէթինի վէհափաշալերինին հիմմէ:

Թինի իսպաթ իթմէկլէ պիայնի մէմ: Նունիյէթ օլունուր: Ղիւմլէյէ մալիւմ տիր քի, հէր ինսանըն ինսանլը: զը պիլմէսի վէ ալէմտէ մէրթէպէյի մէղիյէթ վէ սաատէթէ իրմէսի, մէվէ սիմ թահսիլ օլան էօմրիւնի հիպայէ կէչիւրմէյէրէք՝ օգույուպ եաղմագ վէ թահսիլի քէմալ իթմէքլէ վիճուտէ կէլիւր: Վէլի իւլնիմէթիմիզ Փուտիշահրմիզ էֆէնտիմիզ հաղրէթլէ: րիւրին պիւթիւն թէպաա վէղիւր տօսթանի հագգընտա մէպլիւլ պույրուլան շէվգաթ ու մէրհամէթ ճէլլէլէրի սէմէրէյի ինիյէսի օլաբագ:

Ֆէյզ ու քէմալին մուսէթտիյի օրան
էմիր թահսիլին թաամիմիի միւրատ
ու իլթիզամ պույուրմուշ. վէ հէր
թարաֆտէ տախի ասարը ճէմիլէսի
միւշահատէ օլունմադտա պուլուն-
մուշ տըր: Պու ճիւմէտէն օլարագ
պու մէքթէպտէ տախի կէօրիւլէն
հիւսնիւ թէրպիլէ վէ ըսլահաթ միւ-
րատ վէլի իւլ նիմէթէ մուվաֆրդ
պուլունմադլէ, տօլրիսի քէմալի մու-
պահաթ վէ մէֆիտարէթի իլէ ըզհա-
րը շիւքրանիլէթ գըլնուր: Պու մէք-
թէպին միւրէճէյի օրան Քաթրիգ-
խանէնին Քաթրիկի սապըգը էֆէն-
տինին վէ ֆաթընտան պէրու պապը
մէվանի հէյուլէթլէ Քաթրիգսիզ
գալմասի պու մադուլէ թէրէգգիսի
արզու օլունան ըսլահաթճէ պայիսի
թէէթի, վէ պու թէէթի իսէ մու-
ճիպի թէէսսուր օլմուշէքէն, սայէի
շէվքէթիլայէի ճէնապը Փատիշահի-
տէ ֆազլու քէմալ իլէ մութթաօրթ
օրան իշպու Քաթրիգի ճէտիտ էֆէն-
տի թարաֆը Փատիշահիտէն նասպ
ու թայիսի պույուրմասըլէ, պու քէյ-
ֆիլէթ Քաթրիգհանէ իտարէսինտէ
պուլունան թէպապը շահանէնին պիր
գաթ տահա նէճթիտարըղլէ տէլա-
լէթ վէ էթֆալին պէյլէ հիւսնիւ
թէրպիլէ վէ թաալիւմլէրինէ վէ միւ-
լէթճէ օրան խուսուսաթըն թէրէգ-
գիի ըսլահաթընէ պաշըճէ պիր ա-
լամէթ օլտըգի աղ վադըթ իշինտէ
կէօրիւլէն պաղը ասար ճիւմէսին-
տէն օլարագ, պու մէքթէպտէ միւ-
շահատէ օլունան հիւսնի իմթիզամ
տէլալէթլէ տախի միւսպիթ օլմաղ
իլէ կէնտուլէրինէ պէյսանի թէշէք-
քիւրլէ չօճուգլարըն թահսիլի թա-
լիմտէ թէրէգգիսի վէ հալիմալէրի-
նին իգտամ ու հիմմէթի արզու վէ
թահսինինտէ պուլունտիլիմի պէյսն
իտէրիմ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Բանաստեղծական սգի արդարեւ
քիչերու շնորհած է բնութիւնը,
բայց չեմ սխալիր ըսել՝ թէ նոյն բը-
նութիւնը հաղորդած է մարդկային
սեռին ամեն անհատներուն այնպիսի
սիրտ մի, որ բանաստեղծին մօտցը
յափշտակիչ զօրութեամբն ու անոր
սլաթուիչ ու եռանդուն երեւակայու-
թեան ուժգնութեամբը չյափըշ-
տակուի ինքն ալ: Չկայ սիրտ մի որ
չգորովի, երբ կը տեսնէ անմեղ ա-
րարած մի՝ որ իւր ծագիկ ու կուսա-
կան հասակին մէջ մահուան ձեռքը
կը մատնուի. այս գբացմունքը սրաինն
է. իսկ երբ կը տեսնէ որ այն անմեղ
հասակին մահը բանաստեղծին գրչին
տակ այլակերպեալ, նոր ու սքանչելի
տեսիլներով մեղ կը ներկայացուի,
հոն մեր միտքն է որ կը լռայ:

Բառններս հետագայ ոտանաւո-
րին մէջ լու կ'երեւի: Այս աղջիկ մի է
մեռնողը. իւր հասակին անմեղութիւն-
ը՝ իբրեւ տեսիլ իրեն կը ներկայա-
ցընէ մահուան մօտենալը եւ վերջին
պատրաստութիւնները: Մայրը ա-
նոր վերջին վայրկեանները չտրտմե-
ցընելու համար աղջկանը հասակին
և անոր կուսական ճաշակին յարմար
մեկնութիւններով կը ջանայ քաղցրա-
ցընել մահուան դառնութիւնը: Սի-
մարդկային սիրտը չփղծկիր արդեօք,
երբ կը լսէ օրհասական օրիորդին բեր-
նէն, «Մայրիկ զեռ մի խաբերո՞ւք, քու
փաղաքուշ մեկնութիւններդ մահ-
ուան սոսկալի ճշմարտութեանը քով
կը մատնուին: Այլ մեղ մահկանա-
ցուացո գեղեցիկ օրինակ կու տայ
չխաբուելու աշխարհիս փառայն ու
վայելչութեան պատրանքներէն: Ա-
րանի եթէ կարենային բոլոր արա-
բածք կրկնել անմեղ կուսին, «Այն

ասկի սիւնն 'ի վեր յերկինս լուսափայլ,
 իմ հոգի—ընկալ հրաւեր հրեշտակն
 է ու բաժն խօսքը, որու մէջ կ'երեւի
 աստուածային կամաց հետ ունեցած
 համակերպութիւնը, անխռով հոգին
 ու խաղաղ սիրտը: Բնաիր են դրե-
 թէ բոլոր տողերը, բայց ամսոնս որ
 հեղինակին անունը մեզ յայտնի չէ:

ՏԵՍԻԼ ԿՈՒՍԻ ՄԻՈՅ ՎԱՆԵՑԻՈՅ

Ի ԺԱՄ ՄԱՀՈՒԱՆ ԻԲՐՈՅ

Մայրիկ, մայրիկ, լուր դու բանիս իմ հարցման,
 Այն նորաչէն սայլ գեղեցիկ իմ տեղեան
 Որ ահա կայ 'ի վերայ գրանն, այն զի՛նչ է:
 Ճախարակեայ սիւն տակեղնն որ կանգնեալ
 Ի վեր յերկինս է բարձրացեալ, այն զի՛նչ է:
 Այն բոլորն խնձոր սակի լուսարփի,
 Ի վերայ սեանն որ միշտ շրջի, այն զի՛նչ է:
 Երկու անձինք այն երկրագործ որ դորձեն,
 Անդ 'ի դաշտի զերկիր փորեն, այն զի՛նչ է:
 Այն թեւաւոր երկու տատարակք որք ծայնեն,
 Ի դաշտին անդ քաղցր երգեն, այն զի՛նչ է:

Մայրն առնէ պապախաւի.

Քրդեակ, մրդեակ. գուտար իմ անիւ հոգեակը,
 Այն նորաչէն սայլն 'ի գրանն դոր տեակը,
 Բո գեղազարդ հարմարանի ամբռն է:
 Միւն տակեղնն ճախարակեայ այն կանգնեալ,
 Բո թաղակից պոսկազարդ փետայն է:
 Խնձոր սակի այն գեղեցիկ որ շրջի,
 Բո սիրածին ծաղկաթիթիմ որդին է:
 Այն դորձաւորք զերկիր փորող 'ի դաշտի,
 Բո առն եղբարք բարեփառաակ տողերք են:
 Երկու տատարակք քաղցր երգողք թեւաւորք,
 Տաղեր կանայք քո սիրել տեկնայք են:

Պապախաւի առնէ դոստարն.

Մայրիկ, մայրիկ, զեւ մի՛ խաբեր, իմ քաղցրիկ,
 Այն նորաչէն սայլն 'ի գրանն գեղեցիկ
 Բալնիկ գիտեմ, այն զիս բարձող դադաղն է:
 Այն տակի սիւն 'ի վեր յերկինս լուսափայլ,
 Իմ հոգի—ընկալ հրաւեր հրեշտակն է:
 Այն բոլորն խնձոր սակի որ շրջի,
 Իմ անուշիկ էղբայր մարմնայն հոգին է:
 Երկու անձինք անդ 'ի դաշտի որ դորձեն,
 Զիմ գեղեցիկ փորող բոլոր միակք են:
 Այն թեւաւոր երկու տատարակք որք երգեն,
 Ի հող թաղող իմ քահանայք տարք հարք են:

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՔ

'Երկայ ամսոյս 7 ին ըստ Ն. Տ.
 պարգեւարաշխութեան հանդէս մի
 տեղի ունեցաւ քաղաքիս լէհացի
 Հրէից | ամէլ ըսուած դպրոցին մէջ,
 նախապահութեամբ Աւստրիոյ մե-
 ծապատիւ Հիւպատոս Պ. արվալ
 քերի, որոյ կողմանէ հրաւիրեալ էր
 նաեւ քաղաքիս կառավարիչ Վսեմ.
 Իզդէթ Փաշայն իւր թարգման յար-
 գոյ Պ. Ատէրիատէսի հետ. Հրէից
 մեծ խախամ սինեօր Տափտ Հազա-
 նը և ուրիշ քանի մի երեւելի ան-
 ձինք: Սոյն առթիւ մեծապատիւ
 Հիւպատոսը գեղեցիկ բանախօսու-
 թիւն մի ըրաւ. նմանապէս և Վսեմ.
 կառավարիչը փութաց 'ի պատասխա-
 նի նորին յայտնել իւր սրտին ուրա-
 խութիւնը և շնորհակալութիւնը առ
 Տեսու շն փարձարանին, որ է նոյն ին-
 քն Սեմ. Հիւպատոսը:

Յիշեալ փարձարանը տաք տա-
 րիէն 'ի վեր հաստատուած է ծախ-
 իւք 'ի Վեննա բնակեալ անուանի
 հրեուհի Տիկին Ամէլի, որոյ ան-
 ուամբը կը կոչուի նաեւ դպրոցը:
 Ազգասէր տիկինը իւր հայրենական
 ժառանգութիւնը օգտակար կերպիւ
 գործածելու և իւր ազգին բարիք մի
 ընելու գովելն նպատակաւ հիմնած
 է յիշեալ դպրոցը սուրբ քաղաքիս
 մէջ, որոյ պէտքը ուրիշ ամեն տեղե-
 րու պէս՝ հոս ալ զգալի էր: Աշա-
 կերտաց թիւ քառասունի որոշուած
 է, որոյ քսանը աղքատ պիտի ըլլան
 և իրենց ապուստն ու հագուստը
 հիմնադրին ծախիւքը ըլլալէն 'ի զատ,
 ամսէ ամիս երեսնական դահլիսն ալ
 կը տրուի իրենց: Սորվեցած ուս-
 մանք ին է երրայերէնն ու տրպերե-
 նը: Յառաջող էմ աշակերտաց հա-
 մար չորս միջանակ պատրաստուած

էր, երկուքը արծաթ միտալ, և միւս երկուքը երկաթ, որոնք չորս աշակերտաց վիզը կախուեցան. արծաթի միտալները՝ Պրանչիսկոս (Յովսէփ կայսեր կարգի ժապաւենին գոյնով, իսկ երկաթի միտալները՝ Լըկաթեայ թափ կարգին ժապաւենին գոյնը ունեցող ժապաւեններով:

— Լնցեալ տմառ երբ Լըուսաղէմայ շրջակայ քաղաքներն ու գիւղերը կոտորած կ'ընէին մարախները, աղքատ ֆէլա՛հ կնկան մէկը շատերուն նման ինքն ալ կ'ելլէ դաշտը ու բաւական մարախ ժողվելէն յետոյ՝ կը թողու ծրարը գետինը ու փայտ ժողվելու կ'երթայ. ապա կրկին ետ դառնալով կ'առնու ծրարը ու տունը հասնելով երեկոյեան համար կերակուր կը պատրաստէ սանի մը մէջ զանոնք խաշելով: Իւր տղոց մէկը՝ որ բարեբաղդութեամբ քնացած ըլլալով կերակուրին մասնակից չէր եղած, առտու քնէն արթննալուն մեծ զարմանօք ու սարսափով կը տեսնէ՝ որ տանը մէջ եղող բոլոր անձինք յաւիտենական քունը կը քնանան: Իսկուր կը վազէ ու ձայն կու տայ դրացեաց, որոնք կու գան ու քննութիւն ընելով կը տեսնեն որ սանին տակը սոսկալի օձ մի խաշուած կը կենայ. և այսպէս օձը իւր մահուանէն ետքն ալ քանի մի անմեղ մարդոց մահուան ալ պատճառ եղաւ:

— Թամարացի Լպուքահքուրա անուն վրանաբնակ անձը, որ տակէքանի մի տարի առաջ Լնգղից հիւպատոսի թարգմանին սպանութեանը իբր հեղինակ ճանչցուած էր, անցեալ օր Լյն—Սուլթան ըսուած տեղը սպանուած գտնուեցաւ ուրիշ մէկ ընկերով մի:

— Սուրբ քաղաքս կազով լուսաւորելու խօսք մի կը պտրտի աւագանեաց մէջ. որ եթէ ստուգուելու ըլլայ, նոր լոյս մի եւս պիտի ստանայ Սարգարէից քաղաքը, որ ճշմարիտ լուսոյն որրանն է:

— Լմայոյ 20 ին հասին 'ի սուրբ Քաղաքս Լստորիոյ տէրութեան թիկնապահ կոմս Լլֆրէտ Բաար, և կոմս Ֆիլիպ Բանրիաչի երեւելի անձինքը: Հետագայ օրը եկին յուստ գլխադրի սուրբ Յակոբայ, և բանտին Բրիստոսի՝ որ 'ի սուրբ Հրեշտակապետ. և անտի ելին յայցելու թիւն Սրբազան Պատրիարք Հօր, որ արժանաւոր յարգանօք մեծարեց ըզնոցին վսեմութիւնը 'ի հոյակապ սրբա՛հի Պատրիարքարանիս, որոնք մեծ շնորհակալութեամբ մեկնեցան կրկին տեսութիւն խոստանալով:

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ԵՂԻՇԼԻՒՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՎԱՍՆ

ՎԱՐԴԱՆԱՅ

ԵՒ

ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՏՊԵԱԼ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԱԹՈՒՈՅՍ

1865

Լուսին անգամ 'ի լոյս կ'ընծայուի Սուրբ Լթողոյս տպարանէն, փոքրագիր և երկոտասանածալ, բաղդատութեամբ հին ձեռագրաց:

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

Սամադիք խոշորագիր: